ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2022 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2022 թ.-ին կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 5 հուշագրեր և պայմանագրեր.

- Վալգա մարզի մասնագիտական ուսուցման կենտրոն
- Ազգային հետազոտական համալսարան (ՌԴ)
- Բորոդորիկովայի անվան Կալմիկի պետական համալսարան
- Տրուբիլինի անվան Կուբանի պետական համալսարան
- Վրաստանի գյուղատնտեսական համալսարան

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1

2022 թ. Էրազմուս+-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 39 պայմանագրեր, և ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է 38 համալսարանների հետ: Սկսած 2015 թ.-ից ամեն տարի Էրազմուս+-ի պայմանագրերի ու համագործակցող համալսարանների քանակն ավելանում է: Ընդ որում, այս տարի ՄԿԴ-ն համագործակցություն է սկսել մինչ բոլորովին նոր համալսրանների հետ, որոնց հետ մինչև այդ համագործակցություն չի եղել: Դրանք են. Պոլիտեխնիկական համալսարան դելլ Մարկ, Կրակովի գյուղատնտեսական համալսարան, Պորտոյի համալսարան, Բուրգունդիա-Ֆրանս-Կոնտե համալսարան:

2022 թթ. ՀԱԱՀ-ն իրականացրեց աննախադեպ արտագնա շարժունություն, ապահովելով 79 աշխատակիցների վերապատրաստումներ և դասախոսություններ եվրոպական 28 համալսարաններում: Նման քանակի պատճառները 2-սն են. 2020-21 թթ. COVID-19 պանդեմիայի պատճառով չիրականացված և կուտակված շարժունություններ, ինչպես նաև 2020 թ.-ին ՀԱԱՀ-ի կողմից շարժունության նոր պայմանագրերի քանակի ավելացում:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

		Արտագնա		Ներգնա
	Հաստատություն	աշխա-տակից	ուսա-նող	աշխա-տակից
1.	Բնական պաշարների ու կենսաբանական գիտությունների համալսարան, Ավստրիա	3		2
2.	Բրագանսայի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	2		2
3.	Գրանադայի համալսարան, Իսպանիա	2		
4.	Մալթայի մշակույթի, գիտության և տեխնոլոգիայի քոլեջ, Մալթա	1		
5.	Ալմերիայի համալսարան, Իսպանիա	1		1
6.	Մինհոյի համալսարանում, Պորտուգալիա	4		
7.	Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	1	2	3
8.	Միգել Հերնանդեսի համալսարան Էլչեյում, Իսպանիա	5		
9.	Տերամոյի համալսարան, Իտալիա	2		1
10.	Կլուժ-Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, Ռումինիա	1		1
11.	Թեսալիայի համալսարան, Հունաստան	1		1
12.	Բանատի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, Ռումինիա	2		
13.	Տուշայի համալսարան, Իտալիա	6		
14.	Պանթեոնի հասարակագիտական և քաղաքագիտական համալսարան, Հունաստան	4	1	

15.	Շչեցինի համալսարան, Լեհաստան	1		
16.	Նորվեգիայի Արկտիկական համալսարան, Նորվեգիա	2	1	
17.	Մալագայի համալսարան, Իսպանիա	1		
18.	Ռադբաուդի համալսարան, Նիդերլանդներ	13		
19.	Վիզեուի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	9		2
20.	Արևմտյան Ատտիկայի համալսարան, Հունաստան	5		2
21.	Գայզենհայմի համալսարան, Գերմանիա	1		
22.	Պիրեուսի համալսարան, Հունաստան	5		
23.	Ավեիրոյի համալսարան, Պորտուգալիա	1		
24.	Էվորայի համալսարան, Պորտուգալիա	1		
25.	Աթենքի գյուղատնտեսական համալսարան, Հունաստան	2		
26.	Վալյադոլիդի համալսարան, Իսպանիա	1		
27.	Շաբացի կիրառական գիտությունների ակադեմիա, Սերվիա	1		
28.	Սալոնիկի Արիստոտելի համալսարան, Հունաստան	1	1	
29.	Յագելոնյան համալսարան, Լեհաստան			2
30.	Վրոցլավի բնագիտական և կենսագիտական համալսարան, Լեհաստան			1
	Ընդամենը	**79**	**5**	**18**



ՀԱԱՀ-ում նկատվում է անգլերենին տիրապետող ուսանողների ցավալի նվազում: Այսպես, 2021-22 թթ.-ի աշնանը հայտարարված բազմաթիվ մրցութային տեղեր մնացին թափուր (Էստոնիայի կենսագիտական համալսարան, Ալմերիայի համալսարան, Գայզենհայմի համալսարան, Պանթեոնի հասարակական և քաղաքական գիտությունների համալսարան, Արևմտյան Ատտիկայի համալսարան, Մինհոյի համալսարան-կոնսորցիում, Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարան, Վալյադոլիդի համալսարան, Վրոցլավի բնապահպանության և կենսագիտության համալսարան): Դրանք առընչվում են ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետներին:

Չնայած դրան, 2022 թ.-ի աշնանը և ձմռանը հայտարարված մրցույթների արդյունքում երեք նոր ուսանողներ ստացել են հնարավորություն գալիք կիսամյակում մասնակցելու շարժունությանը, որոնցից 1 ուսանող ստացել է հնարավորություն ուսումը շարունակելու Էստոնիայի կենսագիտական համալսարանում, 1-ը՝ Պիրեուսի համալսարանում և 1-ը ՝ Շչեցինի համալսարանում:

Միաժամանակ նկատվում է նաև անգլերենին տիրապետող աշխատակիցների քանակի կտրուկ նվազում: ՄԿԴ-ն հետևողականորեն փորձում է հնարավորություն տալ այն աշխատակիցներին մասնակցել շարժունությանը, ովքեր կամ չեն մասնակցել, կամ ավելի վաղ են մասնակցեն դրան: Սակայն անգլերենին տիրապետող աշխատակիցների խիստ անբավարարության պատճառով ընտրող հանձնաժողովը ստիպված է լինում

նույն աշխատակցին 2-3 անգամ մասնակցել շարժունության նույն տարում, ինչը ստիպված քայլ է ՄԿԴ-ի կողմից: Հակառակ դեպքում եվրոպական համալսարանները կդադարեն համագործակցությունը ՀԱԱՀ-ի հետ:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Էրազմուս+ ՀԳ2

«Աջակցություն անգլերենով դասավանդման նորարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով» (SMARTI) ծրագրի շրջանակներում 2022 թ.-ի հունվարի 17-21-ը ընկած ժամանականահատվածում Պորտուգալիայի Պորտո քաղաքում տեղի ունեցավ վերապատրաստում ECTS/Թյունինգ շրջանակ խորագրով: ՀԱԱՀ-ի ծրագրի թիմից վերապատրաստմանը մասնակցեցին որակի գնահատման և ապահովման կենտրոնի որակի կառավարման բաժնի վարիչ, ծրագրի փորձագետ Արա Ամիրյանը և ագրոտեխնոլոգիական ինկուբատորի համակարգող, ծրագրի համակարգող Սուսաննա Հայրապետյանը: Վերապատրաստման հիմնական ուղղություններն էին ՝ 1. «Ինչպես գրել պրեզենտացիա», «Ինչպես գրել ուղղորդող նամակ և մոտիվացիոն նամակ», 2. «Ինչպես մշակել նոր կրթական ծրագրեր ECTS համակարգի հիման վրա և ինչպես ապահովել դրանց որակը», 3. «Ինչպես գրել մոդուլներ, կրթական վերջնարդյուքներ և ինչպես գնահատել ուսանողներին» և այլն: 2022 թ.-ի մարտ և ապրիլ ամիսներին SMARTI ծրագրի շրջանակներում տեղի ունեցան ներբուհական վերապատրաստումներ՝ Պորտուգալիայի Կաթոլիկ համալսարանում անցկացրած վերապատրաստման շաբաթվա գիտելիքների հիման վրա: Վերապատրաստմանը մասնակցեցին ՀԱԱՀ-ի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչները: Դասընթացները վարեց կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի ամբիոնի պրոֆեսոր, ՈԳԱ կենտրոնի կառավարման բաժնի վարիչ, SMARTI ծրագրի փորձագետ Արա Ամիրյանը:

2022 թ.-ի սեպտեմբերի 27-28-ը ՀՀ ՊԿԱ-ում հիբրիդային եղանակով տեղի ունեցավ ծրագրի կառավարման խորհրդի հերթական հանդիպումն ու վերապատրաստումը: SMARTI ծրագրի համակարգող՝ Դրեզդենի տեխնոլոգիական

համալսարանից Ջերարդ Քալլենն անդրադարձավ ծրագրի ճանապարհային քարտեզի փոփոխմանը, Լիվերպուլի Ջոն Մուրես համալսարանում տեղի ունենալիք «Անգլերենը որպես դասավանդման միջոց ԱԴՄ» տասը մոդուլների վերապատրաստմանը: Հանդիպման երկրորդ օրը նվիրված էր հիմնական երեք ուսումնական մոդուլներով վերապատրաստմանը, որին հրավիրված էին նաև բուհերի այլ հետաքրքրված աշխատակիցներ:

«Հայաստանում և Ղրղզստանում աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագրերի մշակում և հետազոտական ցանցերի ամրապնդում» (GeoTAK) նախագծի հիմնական նպատակն է զարգացնել հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերը Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում և ամրապնդել հետազոտական և նորարարական կապերը Հայաստանի հանրապետության և Ղրղզստանի Բարձրագույն ուսումնական հաստատությունների, արդյունաբերական և վարչարարական համակարգերի միջև:

Փետրվարի 10-12 կայացավ մեկնարկային հեռահար հանդիպումը, որի ընթացքում յուրաքանչյուր համալսարան ներկայացրեց գործող հետբուհական ծրագրերը և դրանց վերանայման ու հավատարմագրման հետագա ուղիները:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ռիսկերի գնահատում, Կադաստրի կոմիտեում տեղի ունեցած հանդիպման արդյունքում ծրագրի շրջանակներում ստեղծվել է ազգային հետազոտական հարթակ, Գեոմատիկային կից ստեղծվել է խորհրդական հետազոտական կենտրոն, իրականացվել է երկրատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հետազոտությունների և մշակումների կարիքների գնահատում: ՀԱԱՀ-ի թիմը վերապատրաստվել է «Երկրատեղեկատվական համակարգերի (ArcGIS) կիրառությամբ Որոշումների կայացմանն աջակցող համակարգի օգտագործման», Strategies for Development «Դասավանդման և գնահատման հիմունքներ» թեմայով «Հմտությունների և գիտելիքի զարգացում» պիլոտային ծրագրի և «One soil» լրացուցիչ մասնագիտական ծրագրի շրջանակներում կազմակերպված «Թվային հարթակներ գյուղատնտեսությունում» դասընթացների շրջանակներում: Մեկնարկել է հայտագրված սարքերի և սարքավորումների գնումների իրականացման գործընթացը և ձեռք է բերվել սարքերից մեկը՝ դրոնը:

2022 թ.-ի հոկտեմբերին GeoTAK ծրագրի շրջանակներում լիագումար եւ համընթաց նիստերի ընթացքում քննարկվեցին ազգային գեոդեզիական ենթակառուցվածքներին, գեոդեզիական կոորդինատների համակարգերին, անօդաչու թռչող սարքերի թռիչքի պլանավորմանն ու տվյալների կորզմանը, երկրատեղեկատվական տեխնոլոգիաների դասավանդման ուսումնական պլանների մշակմանն առնչվող եւ հարակից հարցեր: Եռօրյա վերապատրաստմանը հետևեց աշխատաժողովը ՀՀ Կադաստրի կոմիտեում, որտեղ ներկայացվեցին GeoTAK-ի հետազոտության արդյունքները եւ քննարկվեցին Հայաստանում ԵՏ տեխնոլոգիաների ոլորտում առկա կարիքները, ներկա եւ ապագա հետազոտություններն ու նորարարությունները:

Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում և Ուկրաինիայում. կրթությունից դեպի էկոլոգիա (AFISHE)

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը որպես գլխավոր համակարգող առաջին անգամ կիրականացնի Եվրամիության կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ կարողությունների զարգացմանն ուղղված ծրագիր: Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել ակվակուլտուրայի և ձկնային տնտեսությունների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ակվակուլտուրայի և ձկնային տնտեսությունների մագիստրոսական ծրագրերի ստեղծմամբ և զարգացմամբ Հայաստանում և Ուկրաինայում, որոնք համարժեք կլինեն եվրոպական նմանատիպ առաջատար ծրագրերին, կարձագանքեն ազգային և տարածաշրջանային կարիքներին ու կամրապնդեն համալսարան-ձեռնարկություն-հետազոտություն համագործակցությունը **(«կրթությունից մինչև էկոլոգիա» հայեցակարգ):**

VISEGRAD+

2022 թ. մարտին կայացավ ծրագրի առաջին երկօրյա հանդիպումը ՀԱԱՀ-ում, որի ժամանակ քննարկվեցին ծրագրի իրականցման քայլերն ու արդյունքները, պլանավորվեծ հեռավար եղանակով վերապատրաստումների ժամանակացույցը: Մայիս-հունիս ամիսների ՀԱԱՀ 5 աշխատակիցներ հեռավար եղանակով

վերապատրաստվեցին ընտրված 5 մոդուլների ուղղությամբ, որից հետո նրանք անցան մոդուլների մշակմանը: 2022 թ. դեկտեմբերին բոլոր մուդուլները պատրաստ են:

2022 թ.-ին սեպտեմբերի 30-ին Միջազգային կապերի դեպարտամենտը հյուրընկալեց Visegrad+ հիմնադրամի ծրագրի համակարգողներ Աննա Ադամչուկին և Եվա Մերենիկսին: Նրանց այցի նպատակը ՀԱԱՀ-ի կողմից համակարգվող «Փափուկ հմտությունների զարգացումը որպես զբաղվածության հիմնական գործիք. V4 փորձի փոխանցումը» ծրագրի մոնիթորինգն էր: Ծրագրի գլխավոր համակարգող Գ. Համբարձումյանը հյուրերին ներկայացրեց ծրագրի նպատակները, իրականացված քայլերը, ծրագրի շրջանակներում տպագրված տեղեկատվական նյութերը, ֆինանսական ծախսերը և հետագա անելիքները:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին: 2022 թ.-ին գիտաժողովների և համաժողովների են մասնակցել ՀԱԱՀ 15 աշխատակիցներ

- «Համալսարանների դերը ազգային նորարարական էկոհամակարգի ստեղծման գործում» խորագրով բուհերի ռեկտորների միջազգային համաժողով, Ղրղզստան - 1 աշխատակից
- ՀԱԱՀ հիմնադրամի կողմից իրականացվող «Մեթանի ձևավորումը սուլֆիդ և նիտրատ պարունակող մնացորդային միջավայրերում» (AZ93573), ԱՄՆ – 1 աշխատակից
- Բիո Դատա ծրագրի փակման համաժողով, Նորվեգիա – 3 աշխատակից
- «Քաղաքային կապույտ-կանաչ ենթակառուցվածքներ Եվրոպայի Արևելքում և Արևմուտքում» ծրագիր, Վրաստանի Հանրապետություն – 1 աշխատակից
- Եվրոպական ԳԿԻՄ երկրների տարեկան համաժողով, Լյուքսենբուրգ – 1 աշխատակից
- Միջազգային «Modelling and optimization of complex systems-MOCS-2022» գիտաժողով, Ռուսաստանի Դաշնություն – 1 աշխատակից

Վերապատրաստումներ: 2021 թ.-ին այլ (բացի Էրազմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման մեկնել են ՀԱԱՀ 7 աշխատակիցներ.

- Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ-ի և Բեռնի Կիրառական գիտու-թյունների համալսարանի գյուղատնտեսության, անտառային և պարենային գիտություն-ների դպրոցի (HAFL) կողմից կազմակերպվող ուսուցողական փորձի փոխանակում, Շվեյցարիա – 2 աշխատակից
- Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Հայաստանում տեղական խաղողի տեսակների պահպանման շրջանակային պայմանների ստեղծում» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն – 1 աշխատակից
- Վիշեգրադյան քառյակի փորձի յուրացումը գիտելիքի և տեխնոլոգիաների փոխադրման բնագավառում, Չեխիա – 1 աշխատակից
- SMARTI ծրագիր – 2 աշխատակից
- GeoTak ծրագիր – 4 աշխատակից

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2022 թ.-ում ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների:

Գործուղումներ

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	5	79
Erasmus+ ՀԳ2		6
DAAD		3
Այլ		33
Ընդամենը	**5**	**121**

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԴ-ն նախորդ տարիների նման առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավոր բոլոր տեղեկությունները ՄԿԴ-ի կողմից տարածվում են սոց. ցանցերով և ՀԱԱՀ պաշտոնական կայքով:

2021-22 թթ. ՄԿԴ-ի հաջողության արդյունքերից է European Solidarity Corps-ի կողմից ՀԱԱՀ-ին 8 տարի ժամկետով շնորհված Որակի պիտակը (Quality Label), ինչի շնորհիվ ՀԱԱՀ-ն հնարավորություն ունի ընդունելու կամավորներ: Ընդ որում, նման պիտակ ՀԱԱՀ բուհերի շրջանում միայն 2-սն ունեն:

2022 թ. փետրվարին ՄԿԴ-ն ակտիվորեն մասնակցեց Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մրցույթին, պատրաստելով համապատասխան փաստաթղթերը գործընկեր համալսարանների հետ: Միաժամանակ ՀԱԱՀ-ն, որպես գործընկեր, մասնակցել է 5 Էրազմուս+ կարողություններին միտված ծրագրերին, իսկ որպես համակարգող նախապատրաստել է 2 ծրագրեր, որից մեկը՝ ՄԿԴ-ի կողմից: 2022 թ.-ին ՀԱԱՀ-ն ունեցավ 2 Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, որոնցից մեկը՝ ՀԱԱՀ համակարգմամբ:

ՄԿԴ-ն մասնակցել է նաև ԵՄ-ի կողմից կազմակերպված Էրազմուս+ տեղեկատվական վեբինարներին, ինչպես նաև Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպումներին: ՄԿԴ-ն կազմակերպեց և հյուրընկալեց Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից կազմակերպված երկու հանդիպումներ ՀԱԱՀ-ում: Դրանցից մեկը վերաբերում էր միջազգային օֆիսների ներկայացուցիչների հերթական հանդիպմանը, որի ընթացքում ՄԿԴ պետ Գ. Համբարձումյանը ներկայացրեց 2015-21 թթ էրազմուսյան շարժունության մանրամասն վերլուծությունը, իսկ մյուս հանդիպումը վերաբերում էր քոլեջների համար նախատեսված էրազմուսի կարողությունների ծրագրերին:

Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակներում հոկտեմբեր ամսին ՄԿԴ-ն կազմակերպել էր 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ,

իսկ 3-րդ օրը առցանց տեղադրվեց ՄԿԴ-ի կողմից պատրաստած «ՀԱԱՀ Էրազմուսյան լավագույն փորձը» նյութը:

Այս տարի ևս դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվում են միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ հայտարարություններ. Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթներ, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձ, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, տարբեր մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր և այլն: 2022 թ.-ին ՄԿԴ-ի կողմից տեղադրվել են շուրջ 141 նյութեր, որոնցից 45-ը եղել են Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթների հայտարարություններ, 8-ը նյութեր Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեության մասին, 36-ը շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

Շարժունության յուրաքանչյուր մասնակից վերադարձից հետո լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրվող առցանց հարցաշարը, որով ՄԿԴ-ն վերհանում է շարժունության գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, վերլուծում արդյունքներն ու մշակում թույլ կողմերի վերացման ծրագրեր:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիթորինգն ու դրանց արդյունքները, ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Ուսանողների և աշխատակիցների շրջանում բարձրացնել օտար լեզվի իմացության մակարդակը: Շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ: Մասնավորապես, 2022 թ. հայտարարված բազմաթիվ մրցույթներ մնացին թափուր:
2. Դասախոսների շրջանում ուժեղացնել միջազգային ծրագրեր կամ ծրագրային առաջարկներ գրելու կարողությունները: Դա անհրաժեշտ է այն տեսակետից, որ նեղ մասնագիտական ծրագրերին դիմելու դեպքում կարողանան կազմել և ներկայացնել ծրագրային փաթեթներ:
3. Ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա և տեղեկատվական նյութեր: Դրսից տարբեր մարդիկ ցանկություն են հայտնում

սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան:

S	W
• միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում • ՄԿԴ աշխատակցիների ակտիվ գործունեություն	• օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների ոչ բավարար քանակ • համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • ոչ բավարար սեփական միջոցներ տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար • ՀԱԱՀ մասնաճյուղերի և գիտահետազոտական ստորաբաժանումների գերպասիվություն միջազգային շարժունության ծրագրերի նկատմամբ
O	T
• ագրարային ոլորտի միակ բուհը ՀՀ-ում • ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից	• ուսանողների թվաքանակի պակասում • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • պատերազմի հետևանքով Հայաստանի՝ որպես անվտանգ երկիր կարգավիճակի թուլացում

	• ՀՀ գտնվող դեսպանատների գերծանրաբեռնված վիճակ